

Համարը N 420 Տիպը Որոշում Սկզբնաղբյուրը ԼՂՀՊՏ-ում չի հրապարակվել Ընդունող մարմինը ԼՂՀ կառավարություն Ստորագրող մարմինը ԼՂՀ Վարչապետ Վավերացնող մարմինը Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 16.11.2004	Տեսակը Մայր Կարգավիճակը Գործում է Ընդունման վայրը Ստեփանակերտ Ընդունման ամսաթիվը 16.11.2004 Ստորագրման ամսաթիվը 16.11.2004 Վավերացման ամսաթիվը Ուժը կորցնելու ամսաթիվը
--	---

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԶԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼԵՂՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

"16" նոյեմբերի 2004թ.

N 420

ք.Ստեփանակերտ

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԶԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Ֆանտոմային զորքերի **ջրային** օրենսգրքի 19-րդ հոդվածին և 121-րդ հոդվածի 5-րդ մասի 18-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Ֆանտոմային կառավարությունը **ո թ ո ռ 2 ու մ է.**

Հաստատել **ջրային** ռեսուրսների մոնիտորինգի իրականացման և հաշվետվությունների գրանցման կարգը՝ համաձայն հավելվածի:

ԼՂՀ ԿԱՐԳԱՊԵՏ

Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
2004թ. նոյեմբերի "16"-ի
թիվ 420 որոշման

Կ Ա Ր Գ

ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են **ջրային** ռեսուրսների մոնիտորինգի իրականացման, օպերատիվ տվյալների հավաքագրման, մշակման և ամփոփման, հաշվետվությունների գրանցման, ինչպես նաև պետական լիազորված մարմինների կողմից նշված գործառնությունների իրականացման հետ կապված իրավահարաբերությունները:

2. **Ջրային** ռեսուրսների մոնիտորինգը ներառում է՝

ա/ մոնիտորինգի իրականացման առաջադրանք,

բ/ կանխատեսումներ,

գ/ իրականացում,

դ/ օպերատիվ տվյալների մշակում և ամփոփում,

ե/ հաշվետվությունների կազմում և հրատարակում,

զ/ ջրերի պետական կադաստրում համապարփակ տվյալների գրանցում:

3. **Ջրային** ռեսուրսների մոնիտորինգի իրականացման առաջադրանքը ձևավորում է Լեռնային Ղարաբաղի Ֆանտոմային զորքերի շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը՝ ելնելով ջրի ազգային ծրագրի իրականացման պահանջներից:

Մոնիտորինգի իրականացման առաջադրանքը բովանդակում է՝

ա/ քանակական ցուցանիշներ՝

ջրային ռեսուրսների հիդրոլոգիական, հիդրոերկրաբանական դիտարկումները և պաշարների գնահատումը,

հիդրոլոգիական դիտարկումների, հիդրոերկրաբանական դիտարկումների ցանկը և տեղաբաշխման սխեման,

դիտարկումներում և հիդրոերկրաբանական դիտարկումներում **ջրային** ռեսուրսների չափման մեթոդները և չափման հաճախականությունը,

քանակական մոնիտորինգի մասին հաշվետվությանը ներկայացվող պահանջները.

բ/ որակական ցուցանիշներ՝
ջրային ռեսուրսների հիդրոֆիզիկական, հիդրոքիմիական դիտարկումները, **ջրային** էկոհամակարգերի վրա վնասակար ազդեցությունների գնահատումը,

նմուշառման կետերի ցանկը /տեղաբաշխման սխեման/,
ըստ դիտակետերի և հիդրոերկրաբանական դիտահորերի պարտադիր ու յուրահատուկ ուսումնասիրման ենթակա վնասակար նյութերի ցանկը, աղտոտվածության աստիճանը, ինչպես նաև այդ ուսումնասիրությունների հաճախականությունը և իրականացման մեթոդները,
որակական մոնիտորինգի մասին հաշվետվությանը ներկայացվող պահանջները.

գ/ կանխատեսումներ՝
ջրային ռեսուրսների վիճակի կայունության,
ջրային համակարգերի անվտանգության,
մթնոլորտի ջերմաստիճանային ռեժիմի,
ջրային բնագավառում աղետալի իրավիճակների առաջացման հնարավորության և ռիսկի տարածքների:

Մոնիտորինգի իրականացման առաջադրանքը ներառում է նաև այլ պահանջներ՝
պայմանավորված **ջրային** ռեսուրսների վերականգնման, կառավարման, ջրաէկոհամակարգերի պահպանման խնդիրներով, ինչպես նաև ստորերկրյա ջրերի տարածաշրջանային /տարածաշրջանային ցանցի միջոցով/ և լուխալ /հանքավայրերի շահագործման պաշարների մոնիտորինգի կապտաժային դիտակետերի միջոցով/ մոնիտորինգի առանձնահատկություններով:

4. Մակերևութային **ջրային** ռեսուրսների մոնիտորինգն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

Մակերևութային **ջրային** ռեսուրսների մոնիտորինգի իրականացման գործառույթներն են՝
ա/ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության **ջրային** օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջի կատարումը,

բ/ սույն կարգի 3-րդ կետով սահմանված մակերևութային ջրերի մասով՝ **ջրային** ռեսուրսների մոնիտորինգի իրականացման առաջադրանքի կատարումը,

գ/ մակերևութային ջրերի քանակական և որակական մոնիտորինգի կարճաժամկետ ու երկարաժամկետ կանխատեսումների համար տվյալների հավաքագրումը և կանխատեսումների կազմումը,

դ/ վարարումներից, սելավներից և սողանքներից պաշտպանվելու համար կանխատեսումների կազմումը,

ե/ հիդրոլոգիական դիտակետերում չափումների իրականացումը, օպերատիվ տվյալների հավաքագրումը, մշակումն ու ամփոփումը,

զ/ ամփոփ տվյալների հիման վրա հաշվետվությունների կազմումը և դրանք **ջրային** պետական կադաստր ներկայացնելը:

5. Ստորերկրյա **ջրային** ռեսուրսների մոնիտորինգն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

Ստորերկրյա **ջրային** ռեսուրսների մոնիտորինգի իրականացման գործառույթներն են՝
ա/ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության **ջրային** օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջի կատարումը,

բ/ սույն կարգի 3-րդ կետով սահմանված ստորերկրյա **ջրային** ռեսուրսների մասով՝ մոնիտորինգի իրականացման առաջադրանքի կատարումը,

գ/ ստորերկրյա ջրերի բնական ու խախտված ռեժիմների և դրանց ձևավորման օրինաչափությունների ուսումնասիրությունները,

դ/ ստորերկրյա ջրերի ռեժիմի կարճաժամկետ ու երկարաժամկետ կանխատեսումների համար տվյալների հավաքագրումը և կանխատեսումների կազմումը,

ե/ ստորերկրյա ջրերի աղտոտման և սպառման աստիճանի գնահատման մասին հենակետային տվյալների ստացումը,

զ/ ստորերկրյա ջրերի որակի փոփոխման կանխատեսումների կազմումը,

է/ հիդրոերկրաբանական դիտահորերում հիդրոերկրաբանական, հիդրոքիմիական և հիդրոֆիզիկական չափումների իրականացման, ստորերկրյա ջրերի պաշարների գնահատման մասին օպերատիվ տվյալների հավաքագրումը, մշակումն ու ամփոփումը,

ը/ ամփոփ տվյալների հիման վրա հիդրոերկրաբանական հաշվետվությունների ու քարտեզների կազմումը և դրանք **ջրային** պետական կադաստր ներկայացնելը:

6. **Ջրային** ռեսուրսների մոնիտորինգի իրականացման մասին հաշվետվությունները գրանցվում են **ջրային** պետական կադաստրում՝ փաստաթղթերի գրանցման և տեղեկատվության տրամադրման կարգի պահանջներին համապատասխան:

7. **Ջրային** պետական կադաստրում գրանցված մոնիտորինգային տվյալները հայտատուներին տրամադրվում են **ջրային** պետական կադաստրում փաստաթղթերի գրանցման, տեղեկատվության տրամադրման կարգի համաձայն:

8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող **ջրային** ռեսուրսների մոնիտորինգի շրջանակներից դուրս մնացած **ջրային** ռեսուրսներից ջրօգտագործման հայտի դեպքում տվյալ **ջրային** ռեսուրսի կամ դրա հատվածի դիտարկումներն իրականացվում են սույն կարգի 3-րդ կետի պահանջներին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության կամ համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպության կողմից՝ հայտատուի դիմումի համաձայն՝ նրա միջոցների հաշվին:

ԼՂՀ կառավարության աշխատակա
զմի
ղեկավար-նախարար

Ս. Գրիգորյան